ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

- Կազմակերպվում էին բավականին ճոխ խնջույքներ, որոնք միայն աշխատանքների, խաղերի և մարզական հանդիսությունների ժամանակ էին ընդհատվում:
- Տոնական խրախճանքներին մասնակցում էին բոլորը: Ուշադրության կենտրոնում էին նաև աղքատները, ովքեր այդ օրերին վայելում էին տոնական առատ սեղանները:
- Հանդիսությունները հատկապես թեժանում էին տոնի վերջին օրը՝ **Բուն Բարեկենդանին**: Երեկոյան, երբ արդեն չափից ավելի հագեցած էին խնջույքներից, նախ՝ տան մեծը, ապա՝ մյուսները, որպես ուտիք և ուրախ օրերի ավարտի ծիսական խորհրդանիշ, «փակում էին իրենց բերանները» ձվով կամ ձվածեղով և միմյանց դիմում հետևյալ բարեմաղթանքով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով, Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»:
- Տարածված էին աքլորակռիվը և գոմշակռիվը: Փայտե ձի էին պատրաստում և զարդարելով այն, խմբով պտտում էին գյուղի մեջ:
- Բարեկենդանի տոնին դիմակավորված կերպար էր երեկոյան տներ այցելող *մեյմունը*, ով հաճախ երեսին ալյուր էր քսում, այծի մազից մորուք դնում, մորթե շորերի մեջ փաթաթվում և երկար ձող բռնած, մտնում էր տներ՝ վախեցնելով տոնախմբության մասնակիցներին: Վերջում մեյմունը

տանտիրոջից մի ընծա էր ստանում ու հեռանում:

- Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին.

  ձիձու, ձիձվարանքը՝ դուրս,
  ցորեն, գարին՝ ներս:

  Այս խոսքերից հետո փետուրը ջարդում էին և մի կողմ նետում:

- Ակլատիզը կատարում էր Մեծ Պահքը հսկողի դերը: Դրանով հաճախ վախեցնում էին երեխաներին, որ վերջիններս չգայթակղվեին Ուտիս տատի կերակուրներով:

Աս տարի-տարի

(Բարեկենդանին կատարվող երգերից)

Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Էրթանք նեյինք՝ էշը ինչը կերեր է,
Էշը խոտը կերեր է,
Էրթանք նեյինք՝ գալը ինչը կերեր է,
Գալը էշը կերեր է:

Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Էրթանք նեյինք՝ արջը ինչը կերեր է,
Արջը գալը կերեր է,
Էրթանք նեյինք՝ գալը ինչը կերեր է,
Գալը գառը կերեր է:
Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Էրթանք նեյինք՝ կատուն ինչը կերեր է,
Կատուն մուկը կերեր է,
Էրթանք նեյինք՝ մուկը ինչը կերեր է,
Մուկը ցորենը կերեր է:

Կատուն մուկը,
Մուկը, ղուշը,
Ղուշը ցորենը կերեր է,
Ղուշը ցորենը կերեր է:
Աս տարի-տարի, գալ տարի-տարի,
Աս տարի-տարի, գալ տարի-բարի: